ւորն , երկոքեանքդ քրիստոնեայ և հաւատակից կք , չէ ինչ
ինձ ' ի պատկերաց ուր և լիցի . համարձակեալ ասաի Յու-
նաց ասեն՝ ահա ըստ հրամանի ձերոյ ակամայ տամք զխորան-
սըն , բայց սոքա եղեալ են ' ի մոլ սիրել նաեւ յատակին
և չրջապատ որմոցն . նուրի , եթէ թողուցեմք ' ի կամս ձեր
չտայք մատնաչափ տեղի , այլ ըստ հրամանի Արքային և
հաստատ որոշման , տեղիս այս Հայոց է՝ եթէ ' ի վերայ
խորանի կանգնեալ կատարեսցեն զօրէնս, ճշմարիտ են բանք
ձեր , իսկ եթէ ' ի վերայ յատակի եւ ժողովուրդքն զկնի ,
յայնժամ ամենայն իրօք յատակն եւս Հայոց լինի , Յոյնք
յանհնարինս մտեալ՝ ասեն՝ եթէ այդպէս է՝ ուրեմն բա-
ժանորդ եղիցի տեղին այն , որպէս դուեն եղեւ . ձայնա-
կից էր սմին և Դատաւորն : Իսկ Հայք աղաղակէին թէ ան-
մարթ է այդմ լինիլ , և ' ի բազմանալ աղաղակաց երկուց
կողմանց , Դատաւորն լռեցոյց զնոսա և ասէ՝ Դպիրք և Ա-
սորիք ունին յատուկ սեղանս յեկեղեցին Բեթղեհէմի , իսկ
Հայք եւ ոչ քայլ մի ոտին . զնոյն ասէին եւ այլազգիքն .
եւ թերի թողեալ զխնդիրն՝ իջին բազմութեամբ յԱյրն .
եհարց Դատաւորն ցՀայս , ունի՞ք աստ կանթեղս և աշտա-
նակս , նոքա ասեն՝ ունէաք յառաջագոյն , որպէս տեսանի
' ի հրովարտակս և ' ի դիւրս Դատարանի , այլ այժմ և ոչ մի
ինչ , հուպ եհան Դատաւորն և եհարց ցՅոյնս , դուք և
Հայք Քրիստոնեա՞յ էք , ասեն այո, լինի՞ զնաս քրիստոնէու-
թեան ձերում եթէ Հայք եւս ունիցին աստ քանի մի կան-
թեղս , լռեցին Յոյնք , և ' ի ստիպել Դատաւորին՝ ասեն որ
մինչեւ ցայժմ չէ լեալ , այժմ նորաստհման ինչ չլինի , և
բանք բազում , ոչ ինչ ասացեալ ելին բազմութեամբ ' ի
վեր եւ բազմեցան : Դատաւորն յետ խորհելոյ ընդ Նուրի
էֆէնտեայ առանձին՝ ասէ , Հայք եւս կախեսցեն 5 կան-
թեղս յԱյրին , և վերջացի խնդիրն : Բարձրացոյց Թարգ-
ման Աւետիս զձայն իւր և լռեցոյց զամենեսեան և սկսաւ
յառաջ բերել զդատն Կոստանդինուպօլսոյ՝ եղծանիլ հրա-
վարտակին , զիմաստս երկուց հրովարտակաց՝ զբաւն բա-
ժանորդ՝ այլազգն հանդերձ , և ' ի վերջոյ ասէր՝ երկնչիմք
' ի Թագաւորէն , զի տեսաք զպատիժ հակառակողաց հրո-
վարտակին եւ չարաչար մեկնողաց զիմաստս նորին , և ' ի
սոյն նուագի եւս սպառնացեալ է Արքայ պատիժս այնպի-